

## ԱԶԳԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

### *Միխայիլ Աղաջանյան*

Թուրքիայի արևելյան շրջանների հայության ներկա վիճակի խնդիրները դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից: Կարելի է ասել՝ չկա քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական որևէ վերլուծական ուսումնասիրություն, որն անդրադառնում է Թուրքիայի արևելյան շրջանների հայերի ներկա դրությանը: Ակնհայտ փաստ է, որ այնտեղ ապրում են հայկական ծագում ունեցող մարդիկ, ովքեր պահպանել են ազգային ինքնագիտակցությունը և գիտեն իրենց հայկական արմատների մասին: Քաղաքացիական պատերազմի ժամանակահատվածում խտրական քաղաքականությունը նրանց հանդեպ բազմակողմ բնույթ ունի. այն վերաբերում է նրանց ազգային-մշակութային և սոցիալ-տնտեսական իրավունքներին, խտրական սահմանափակումներ են կիրառվում նաև հարևան պետության՝ Հայաստանի հանդեպ: Հողվածը նպատակ ունի վեր հանել այդ քաղաքականության առանցքային կետերը, ներկայացնել դրա առնչությունն ընդհանրապես Թուրքիայի ազգային փոքրամասնություններին և մասնավորապես՝ արևելյան շրջանների հայությանը:

### *Ներածություն*

Փորձագետները նշում են, որ Թուրքիայի հայությունը կարելի է բաժանել երեք խմբի՝ ըստ էթնոկրոնական առանձնահատկությունների.

**1. «Պաշտոնական» հայեր.** այս խմբի ներկայացուցիչներն ապրում են տարբեր մարզերում, Հայ Առաքելական, Կաթոլիկ կամ Ավետարանչական եկեղեցիների հավատացյալներ են: «Պաշտոնական» հայության կապը Կոստանդնուպոլսի կազմակերպված համայնքի հետ քիչ թե շատ պահպանվել է: Դա հատկապես վերաբերում է պատմական Կիլիկիային:

**2. «Բայանացած» հայեր.** Այս էթնոկրոնական խմբում հիմնականում պոստսոսյան և համշենահայերն են, որոնք մահմեդականացվել են 17-18-րդ դդ., բնակվում են Սև ծովի ափին, պատմական Ջանիկից (Սամսուն) մինչև հայ-վրացական սահմանն ընկած տարածքներում:

**3. «Կրիպտո-հայեր»** («ծպոյալ» հայեր). Այս խմբում հայոց ջարդերի և, մասնավորապես, 1915թ. Եղեռնի ժամանակ բռնի և ֆիզիկական ոչնչացման սպառնալիքով իսլամ ընդունած մարդիկ են: Նրանք ապրում են քրդական և

թուրքական հեռավոր գյուղերում, վերոնշյալ «խլամացած» հայերից տարբերվում են իսլամ ընդունելու ժամանակով և եղանակով [1]:

Ըստ այս բաժանման, որի հիմքում ընկած է սեփական ինքնության գիտակցումը պահպանելու չափանիշը, բոլոր երեք սուբէթնիկ խմբերն այս կամ այն կերպ գիտակցում են իրենց հայկական ինքնությունը կամ առնվազն գիտեն (կամ «կասկածում» են) իրենց հայկական արմատների մասին: Մեփական ինքնության գիտակցության աստիճանը տարբեր է՝ ազգային ինքնության մեջ բացարձակ համոզվածությունից մինչև աղոտ պատկերացումներ իրենց հայկական արմատների մասին:

Լրացուցիչ (ըստ էության՝ ամենազգալի) բարդությունները կապված են այն բանի հետ, որ վերջին երկու խմբերն այս կամ այն չափով իսլամ են դավանում: Այսպիսով, Թուրքիայի արևելյան մասի հայերի պարագայում առաջանում է ազգային և կրոնական ինքնության բախում, քանի որ երբ «հայ» ենք ասում, ապա ենթագիտակցաբար քրիստոնեությունից բացի որևէ այլ կրոնական ինքնության տեղ նրա համար չենք թողնում: Դա կարող է լինել քրիստոնեության մեկ այլ ուղղություն, որը տարբերվում է «պաշտոնական հայկականից» (կաթոլիկներ, տարբեր բողոքական ուղղություններ), թեև այստեղ ևս առկա են հայտնի խնդիրներ, բայց բացարձակապես չի ընկալվում կրոնական պատկանելության իսլամական վեկտորը: Բոլոր պարագաներում նրանք հայկական արմատներ, հայկական էթնոմշակութային ծագում ունեցող մարդիկ են, ուստիև, մեր կարծիքով, ավելի ճիշտ և մերօրյա իրականությունը համահունչ կլինի այս մարդկանց էթնոմշակութային և կրոնական առանձնահատկությունները նշելու համար օգտագործել *այլայեզու, այլադավան* հայեր եզրերը:

Սկզբունքային են թվում այս տարածքում հայերի իսլամ ընդունելու դրդապատճառների տարբերությունները: Դրանք խմբավորվում են երկու հիմնական գործոնների շուրջ. կամավո՞ր, թե՞ հարկադրական է եղել իսլամացումը: Վերոնշյալ «խլամացած» հայերին», հաշվի առնելով այն ժամանակաշրջանը (17-18-րդ դդ.), երբ նրանք ընդունել են մահմեդականությունը, կարելի է դասել «համեմատական կամավորության» տեսակին, մինչդեռ «կրիպտո-հայերը» իսլամն ընդունել են 1915թ. և հետագա տարիների իրադարձությունների հետ կապված: Նրանց պարագայում ակնհայտ է իսլամի բռնի, հարկադիր ընդունման հանգամանքը, ինչը բացասաբար է անդրադարձել նրանց անմիջական ժառանգների՝ հայկական էթնոմշակութային ինքնության ընկալման վրա:

Դիտարկենք Թուրքիայի ներկա քաղաքական իրականությունը՝ երկրում ազգային փոքրամասնության և մասնավորապես՝ արևելյան շրջաններում պահպանված հայ փոքրամասնության նկատմամբ խտրականության

հարցի տեսանկյունից: Պարզ է, որ վերլուծությունն ունի քննադատական դիրքորոշում, քանի որ Թուրքիայի արդի քաղաքական գիծը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց անհատական իրավունքների և որպես էթնոկրոնական խումբ փոքրամասնությունների հավաքական իրավունքների պաշտպանության ուղղությամբ, մեր կարծիքով, թերի է, կրում է եվրոպական չափանիշներին «հարմարվելու» բնույթ, ինչը միանշանակ մատնանշում է այս գծի անարդյունավետությունն ու անգործունակությունը:

Հիմնախնդրի համալիր վերլուծությունը, որ կատարվելու է առանձին բլոկներով, ենթադրում է Թուրքիայի արևելյան շրջաններում պահպանված հայերի ներկա դրությանը համակարգային մոտեցում, որի գլխավոր բովանդակային բաղադրիչը հարցին ազգային փոքրամասնության (որն իր վրա դեռ շարունակում է զգալ ցեղասպանության քաղաքականության հետևանքները և չի վերականգնել ազգային նվազագույն իրավունքները) իրավունքների պաշտպանության համատեքստ հաղորդելն է:

Ներքոբերյալ բլոկները, մեր կարծիքով, պետք է հենվեն «ազգային փոքրամասնության պաշտպանություն» հասկացությանը: Դա թույլ կտա, մի կողմից՝ քննարկման դաշտ մտցնել Թուրքիայի արևելյան շրջաններում ապրող հայերի խնդիրը՝ դրան հաղորդելով բազմակողմանի իրավաքաղաքական համատեքստ և, մյուս կողմից՝ նախադրյալներ ստեղծել այս մարդկանց ինքնանույնականացման համար՝ որպես հայկական էթնոսին պատկանող անձինք:

### **1. Արտաքին քաղաքական բլոկ**

Թուրքական դիվանագիտությունն արդի փուլում որոշակի հակասություն է արձանագրում իր արտաքին քաղաքական շահերի պաշտպանության և շրջանների զարգացման ներքաղաքական գծի անցկացման համատեղման հարցում: Մի հետաքրքիր մանրամասն ևս. Թուրքիան բավական հետևողական քաղաքականություն է վարում թուրք տարրի շահերը պաշտպանելու ուղղությամբ՝ իր միջազգայնորեն ճանաչված տարածքային սահմաններից դուրս, բայց այդ սահմանների ներսում իրականացնում է այն, ինչ դատապարտում է և ինչի դեմ պայքարում է իր արտաքին քաղաքականությամբ<sup>1</sup>:

<sup>1</sup> Այս հակասություններն առավել հստակ երևացին անցյալ դարի 90-ական թթ. միջազգային ասպարեզում տեղի ունեցած հիմնարար փոփոխություններից հետո: Թուրքիան կանգնեց այն փաստի առջև, որ պետք է անցկացնել ինքնուրույն քաղաքականություն՝ սեփական «թյուրքական» դեմքով, ինչը ենթադրում էր սառը պատերազմի ժամանակաշրջանի իր ավանդական և բնական դաշնակիցներից հրաժարում կամ նրանցից արտաքին քաղաքական կախվածության առնվազն զգալի նվազեցում: Այս գծի ձևավորումը շարունակվում է մինչև օրս, բայց դրա սաղմերը կարելի է հայտնաբերել դեռևս սառը պատերազմի «դասական» փուլում: Այս երևույթի արմատները, որոնք քաղաքակրթական-մշակութային բնույթի են, ամենայն հավանականությամբ ընկած են այն փաստարկների հարթությունում, որոնց հիմքում գտնվում է մի պարզ ճշմարտություն. թյուրքական էթնոսի կենտրոնը, որն անցյալում ներկայացված էր բացառապես Օսմանյան կայսրությամբ, իսկ այժմ՝ քեմալական Թուրքիայով, կայսերական էներգիայի վիթխարի խտացում է հանդիսանում, որն ուղղված է իր ազդեցության ընդլայնմանն ու տարածմանը, իր արտաքին քաղաքական շահերի պաշտպանմանը, եթե նույնիսկ դրանք հակասում են ներպետական քաղաքականությանը:

Թուրքիան իր աշխարհագրական հարևան տարածքներում թյուրքական տարրի կոշտ «ներդրման» քաղաքականություն վարելու, իսկ այնուհետև թյուրքերի «արմատական» իրավունքների պաշտպանությունը պահանջելու բավական հարուստ փորձ ունի, ինչն անխուսափելիորեն հանգեցնում է թյուրքական արբանյակ-պետությունների ստեղծմանը: «Ադրբեջանական» պետության ստեղծման փորձն արդեն դրա ապացույցն է: Բերենք իր արբանյակներին «պետականացնելու» թյուրքական քաղաքականության մի քանի հատկանշական նրբերանգ: Ակնհայտ է դառնում թուրքական քաղաքականության գլխավոր գիծը, որը նկատվում է նաև Ղարաբաղյան հարցի պարագայում:

1975թ. փետրվարի 13-ին Կիպրոսի թուրքական համայնքի առաջնորդները հռչակեցին Կիպրոսի թուրքական դաշնային պետության (ԿԹԴՊ) ստեղծումն այն տարածքում, որտեղ թուրքական զինված ուժերն իրենց վերահսկողությունն էին հաստատել: Ռաուֆ Դենքթաշի հայտարարությունում ասվում էր, որ Կիպրոսի թուրքերի նախարարների խորհուրդը և ինքնավար վարչակազմի օրենսդրական ժողովը որոշել են ստեղծել դաշնային պետություն և որ Կիպրոսի սահմանադրությունը պետք է փոխվի նոր պետության կերտմանը համապատասխան: Նույն օրը Դենքթաշը ՄԱԿ գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչին է ներկայացնում առաջարկություններ, որոնցով նախատեսվում էր Կիպրոսում ստեղծել երկհամայնքային և երկտարածաշրջանային պետություն՝ կազմված թուրքական և հունական դաշնային պետություններից: Առաջարկություններում նախատեսվում էր դաշնային վարչակազմի գործառույթների սահմանափակում և լայն լիազորությունների տրամադրում թուրքական և հունական դաշնային պետություններին: Բայց դրանցում ոչինչ չէր ասվում թուրքական գործերի գործողությունների արդյունքում հարավ փախած հույների՝ իրենց տներ վերադառնալու, Կիպրոսից օտարերկրյա գործերի դուրսբերման, երկու դաշնային պետությունների տարածքների որոշման սկզբունքների մասին [2]:

Կիպրոսի թուրքերի համախմբման և պետականության ամրապնդման նպատակով ԿԹԴՊ մեջլիսը 1983թ. նոյեմբերի 15-ին որոշում ընդունեց Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության (ՀԿԹՀ) հռչակման մասին և միևնույն ժամանակ ընդունեց նաև նրա անկախության հռչակագիրը: Այս որոշման մեջ կրկին խոսվում է «երկու հավասար ժողովուրդներին» դաշնության ստեղծման և այն մասին, որ «նրանց միջև վիճելի հարցերը կարող են հեշտությամբ լուծվել, եթե խոչընդոտներ չհարուցվեն» [3]:

Թուրքիան, որ Կիպրոս ներխուժմամբ և կղզու մի մասի զավթմամբ ինքն է փաստորեն ստեղծել Կիպրոսյան հիմնախնդիրը և ակտիվորեն մաս-

նակցել է հիմնախնդրի խաղաղ կարգավորման զանազան փորձերին, ոչ միայն պահպանում է իր ռազմական ներկայությունը կղզում, այլև պարբերաբար բարձրացնում է նրա մարտունակությունը: Չավթված տարածքներում կատարվել է նաև Թուրքիայից եկածների (որոնց թիվը հասնում է 120-130 հազարի) վերաբնակեցում: Այսպիսով, կարելի է արձանագրել հակադիր նպատակներ ունեցող երկու գործընթացների առկայություն. Կիպրոսի վերամիավորմանն ուղղված բանակցային գործընթաց և կղզու երկու մասի փաստացի բաժանման հետևանքների ամրագրում: Եթե առաջին գործընթացում Թուրքիան մասնակիցներից մեկն էր, ապա երկրորդ գործընթացը հրահրվել է նրա կողմից, և նա էլ դրա գլխավոր «շարժիչն» է [4]: Այստեղից էլ ընդհանուր սխեման, որի որոշակի տարրերի կարելի է հանդիպել նաև «աղբբեջանական» կուրսի դեպքում (Ղարաբաղյան հարցի առնչությամբ՝ «երկու համայնք» - «երկու գոտի» - «թյուրքական պետություն»): Այն անվերապահորեն կարելի է համարել թուրքական դիվանագիտության ունիվերսալ մոտեցումը վերը նշված թյուրքական տարրի ներդրման և այնուհետև նրա «օրինական» իրավունքների պաշտպանության պահանջի քաղաքականության վերաբերյալ:

Կարևոր է նշել, որ վերջին ժամանակներս թուրքական կողմը Հյուսիսային Կիպրոսի հիմնախնդիրը կապում է տարածաշրջանային համակարգային նոր բաղադրիչի՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղի հետ: «Պաշտոնական Անկարան պետք է հայտարարի, որ միջազգային նշանակության խողովակաշարերի պաշտպանության անհրաժեշտությունից էլնելով՝ թուրքական զորքերը դուրս չեն բերվելու Հյուսիսային Կիպրոսից», - Իզմիրում հայտարարել է Կիպրոսի թուրքերի առաջնորդ Ռաուֆ Դենքթաշը: «Ո՞վ կապահովի ԲԹՋ նավթամուղի անվտանգությունը, եթե թուրքական զորքերը հեռանան Հյուսիսային Կիպրոսից», - հարցնում է նա՝ նշելով, որ եթե կղզու հյուսիսային մասն անցնի հույների վերահսկողության տակ, ապա Թուրքիայի նավահանգիստները կփակվեն անխոչընդոտ նավարկության համար: «Թուրքիան իր ձեռքին կարևոր փաստարկ ունի՝ միջազգային նշանակության խողովակաշարերի անվտանգությունը, և նա պետք է օգտվի դրանից», - ընդգծել է Դենքթաշը՝ նշելով, որ «Կիպրոսյան հիմնախնդիրը թուրքերի ազգային հարցն է» [5]:

Այս փաստարկի հետագա շեշտադրումը Թուրքիայի կողմից (եթե այն հատկապես հնչի պաշտոնական Անկարայի կողմից) մեզ հնարավորություն կտա դնել Թուրքիայի արևելյան տարածքների (որպես տարածքներ, որոնցով այժմ անցնում և հետագայում անցնելու են խողովակաշարեր) աշխարհաքաղաքական նշանակության մասին հարցը: Ընդ որում՝ պարտա-

դիր կերպով այս փաստը պետք է կապել Հայաստանի (որն անցյալում զրկվել է իր պատմական տարածքներից, և այժմ էլ արհեստականորեն թույլ չի տրվում նրա մասնակցությունը տարածաշրջանային նախագծերին, որոնք որոշ չափով կփոխածակեին անցյալի նրա կորուստները) ներկա շրջափակման հետ:

## **2. Իրավական և սոցիոմշակութային բլոկներ**

Իրավական բլոկը սերտորեն առնչվում է Թուրքիայի արևելյան շրջաններում ապրող հայերի սոցիոմշակութային հարցերի հետ: Սոցիոմշակութային բնույթի առանձին ասպեկտները կարելի է բաժանել ըստ հետևյալ խնդիրների. 1. նշված տարածքներում հայ մնացորդացի մշակութային ժառանգության հետևողական ոչնչացում, 2. երկրի արևելյան շրջանների հայերի մշակութային ինքնության ոտնահարում. թուրքական ղեկավարությունը խոչընդոտներ է ստեղծում, որպեսզի այդ մարդիկ չկարողանան կապեր հաստատել Հայաստանի և արտերկրի իրենց հայրենակիցների հետ, 3. հայերի մշակութային հարկադիր ուժացում:

Դեռևս 1933թ. Ազգերի լիգան միջազգային կոնվենցիայի նախագիծ էր մշակել բնակչության որոշակի խմբերի մշակույթի ոչնչացման մասին, որում ասվում էր, որ «այդ մշակույթի ոչնչացումը» հանգեցնում է կամ համապատասխան հանրության անդամների ֆիզիկական բնաջնջմանը, կամ սեփական մշակութային պատկանելության աստիճանական կորստին ու դրա փոխարինմանը մեկ ուրիշով:

Մեր ուսումնասիրության շրջանակներում կարելի է խոսել այն ազգային փոքրամասնությունների մասին, որոնք ենթարկվել են «ազգային-մշակութային» ցեղասպանության և ներկայումս առավել քողարկված ձևով կրում են դրա հետևանքները: «Ազգային-մշակութային» ցեղասպանության ցանկացած նպատակաուղղված քաղաքականություն, բռնի ուժացում համարվում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային պակտի 27-րդ հոդվածի խախտում: Հակառակ պարագայում օտար միջավայրում (մշակութային, էթնիկ, լեզվական, կրոնական առումով) ապրող ազգային փոքրամասնությունները կանգնում են ընտրության առջև. կամ ուժացվել, կամ պահպանելով ազգային ավանդույթները, սովորությունները, մշակութային արժեքները՝ հայտնվել մեկուսացված վիճակում:

Արդի միջազգային իրավունքի ոլորտում փորձեր են արվում իրավական ամրագրում տալ «ազգային-մշակութային ցեղասպանություն» հասկացությանը: Այսպես, 1992թ. Մարդու իրավունքների գծով ՄԱԿ հանձնաժողովի բուն ժողովուրդների հարցերով հանձնաժողովի աշխատանքային խումբը պատրաստեց հռչակագիր բուն ժողովուրդների իրավունքների մա-

սին<sup>1</sup>, որում (հոդված 7) թվարկված են «ազգային-մշակութային ցեղասպանության» հանցակազմի մեջ մտնող արարքները: Դրանք են՝ 1. ցանկացած գործողություն, որի նպատակն է կամ որի արդյունքում ամբողջականությունից զրկվում են առանձին հանրություններ, վերանում են նրանց մշակութային կամ էթնիկական բնութագրերը և ինքնատիպությունը, 2. բռնի ուժացման ցանկացած ձև՝ այլ մշակույթ կամ կենսակերպ պարտադրելու միջոցով, 3. սեփական հողերը, տարածքները կամ ռեսուրսները տնօրինելու իրավունքի ցանկացած սահմանափակում կամ զրկում, 4. համապատասխան հանրությունների դեմ ուղղված ցանկացած քարոզչություն [6]:

Ինչ վերաբերում է ազգային-մշակութային ցեղասպանությունից պաշտպանության տարածքային ասպեկտին, ապա ցանկացած բռնի տեղահանում, հայրենագրություն, զբաղեցրած տարածքներից օտարում, այսպես կոչված «էթնիկական գտում» հանգեցնում է դարերի ընթացքում ձևավորված սովորությունների, ավանդույթների, ընդհանրապես կենսակերպի վերացմանը:

Կարելի է արձանագրել, որ այս հարցի շուրջ քննադատության իրավական բլոկը առավել «դյուրագգաց» է Թուրքիայի ներկայիս ղեկավարության պարագայում, քանի որ՝ 1. ստեղծում է ուղիղ կապ 1915թ. և հետագա տարիներին իրենց պատմական հայրենիքում արմատական հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության հետ, 2. հրատապ է Թուրքիայի համար (ընդ որում՝ նրա համար «հիվանդագին» դիրքորոշումներում՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանություն)՝ եվրաինտեգրման գործընթացի համատեքստում:

Առաջին կետի վերաբերյալ կարելի է նշել հետևյալը: Ինչպես գրում են իրենք՝ թուրք փորձագետները, «երբ խոսքը վերաբերում է հայերի ցեղասպանությանը, Թուրքիան վախենում է, որ այդ փաստի միջազգային ճանաչումը կվնասի նրա քեմալական, արևմտյան նույնականացմանը և տարածքային ամբողջականությանը, կվերածնի Սևրի պայմանագիրը, մասնավորապես՝ հայկական անկախ պետության ստեղծման մասին նրա դրույթը: Հենց հանրապետության ռեժիմի և նրա աշխարհիկ ինստիտուտների ամբողջական վրա հիմնված քեմալական համակարգի հնարավոր փլուզման երկյուղը, ի վնաս ժողովրդավարության, թույլ չի տալիս Թուրքիային ձերբազատվել անցյալի բեռից: «Վերագայինի» գերակայության վրա հիմնված

<sup>1</sup> Բուն ժողովուրդների իրավունքների մասին հռչակագիրը, որի շուրջ բանակցությունները տեղի են ունեցնում 11 տարի, քվեարկության դրվեց ՄԱԿ նոր Մարդու իրավունքների գծով խորհրդում, որը փոխարինելու էր եկել Մարդու իրավունքների հանձնաժողովին: Հռչակագրի ընդունման քվեարկության ժամանակ (2006թ. հունիսի 29) խորհրդի 30 անդամ պետություններ կողմ քվեարկեցին, երկու պետություն՝ Կանադան և Ռուսաստանը, դեմ էին փաստաթղթին, ձեռնպահ մնաց 12 պետություն: Հռչակագիրը պետք է ներկայացվի ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի հավանությանը: Կարևոր է նշել, որ բուն ժողովուրդների մասին հռչակագիրը միջազգային փաստաթուղթ չէ և պարտադիր չէ պետությունների համար, ուստի իրավաբանական պարտավորություններ չի դնում կառավարությունների վրա:

քեմալական համակարգի համար անհնար է ընդունել հայերի ցեղասպանության փաստը՝ իր երկարատև տիրապետությունը կորցնելու վախի պատճառով» [7]:

Երկրորդ կետի (իրավական նորմերի ներմուծման գործընթացը որպես եվրաինտեգրման պայման) մասին կարելի է նշել հետևյալը: 1923թ. Լոզանի պայմանագրի համաձայն՝ պաշտոնապես փոքրամասնություն էին ճանաչվում միայն Կոստանդնուպոլսի հայերը, հույները և հրեաները<sup>1</sup>: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային պակտի վավերացման ժամանակ (2003թ. սեպտեմբերի 23) Թուրքիայի խորհրդարանը վերապահում արեց այն մասին, որ պակտի դրույթները մեկնաբանվելու և կիրառվելու են Թուրքիայի Հանրապետության 1982թ. սահմանադրության և 1923թ. Լոզանի պայմանագրի համապատասխան դրույթների համաձայն: Այսպիսով, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության նորմերն էլ պետք է համեմատելի լինեին Լոզանի պայմանագրի և երկրի սահմանադրության համապատասխան դրույթների հետ<sup>2</sup>:

Բացի այդ, հաշվի առնելով Հայաստանի և Թուրքիայի միջև պաշտոնական դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը, կարևոր է նշել այն, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտը վավերացնելիս Թուրքիան հռչակել է հետևյալը. «Թուրքիայի Հանրապետությունը հայտարարում է, որ կկատարի պակտի դրույթները միայն այն պետությունների հետ հարաբերություններում, որոնց հետ դիվանագիտական հարաբերություններ ունի» [8]:

Փորձագետները նշում են, որ «Եվրամիություն մտնելու իրարանցման գործընթացում Թուրքիայի կառավարությանն առընթեր մարդու իրավունքների խորհուրդը 2004թ. հոկտեմբերին հրապարակել է մի տեղեկագիր, որում ընդգծվում էր տարբեր ազգերի և էթնիկական խմբերի գոյության մասին: Կառավարություն ուղարկված տեղեկագիրը չհաստատվեց և պաշտոնական չդարձավ, բայց, չնայած դրան, կարևոր փաստաթուղթ է հանդի-

<sup>1</sup> Լոզանի պայմանագրում խոսվում է ոչ թե ազգային, այլ կրոնական փոքրամասնությունների մասին: Մինչև օրս Թուրքիան ջանում է փոքրամասնություններին նույնականացնել ոչ թե էթնոմշակութային, այլ կրոնական չափանիշով:

<sup>2</sup> Այսպես, օրինակ, Թուրքիայի սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ «...ժամերգությունը, կրոնական ծեսերն ու արարողությունները պետք է լինեն ազատ պայմանով, որ չխախտեն 14-րդ հոդվածի դրույթները: ...Կրոնական և էթնիկայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացվում են պետության հսկողությամբ և վերահսկողությամբ»: Իր հերթին՝ սահմանադրության 14-րդ հոդվածն ամրագրում է, որ «սահմանադրությամբ հաստատված ոչ մի իրավունք և ազատություն չպետք է իրականացվեն պետության անբաժանելի տարածքային և ազգային ամբողջականության խախտման, թուրքական պետության և հանրապետության գոյության սպառնալիքի ստեղծման նպատակով...»: Սահմանադրությամբ քաղաքացիության կարգավիճակից զրկումն ուղիղ կախման մեջ է դրվում պետության նկատմամբ օրինապահությունից. «... ոչ մի թուրք չպետք է զրկվի քաղաքացիությունից, եթե չի կատարել այնպիսի արարք, որն անհամատեղելի է հայրենիքին հավատարմության հետ»:



ասնում, որն արտացոլում է իրերի իրական դրությունը Թուրքիայում: Դրանում, մասնավորապես, նշվում էր. «Անցել է արդեն թուրքական ինքնատիպության և մեկ մշակույթի ու լեզվի գերակայության վրա հիմնված պետականության ժամանակը»: «Թուրքական ինքնատիպության գերակայության» տակ առաջարկվում էր հասկանալ նաև բազում այլ մշակութային-լեզվական ինքնատիպություններ [1, c. 67]:

Մինևույն ժամանակ, Թուրքիան չնայած երկար ժամանակ Եվրախորհրդի անդամ է, բայց մինչև օրս ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ կոնվենցիաների (դրանցից ամենահայտնիներն են Ազգային փոքրամասնությունների պաշտպանության 1995թ. շրջանակային կոնվենցիան և Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիան) գծով ոչ մի պարտավորություն չի ստանձնել:

2006թ. սկզբին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՄՎ) ընդունեց անդամ պետություններին ուղղված հերթական հանձնարարականը ազգային փոքրամասնությունների իրավունքների հարցի վերաբերյալ: Կարելի է բերել այդ փաստաթղթի հետևյալ դրույթները, որոնք կարող են հետաքրքրական լինել Թուրքիայի արևելյան շրջաններում ապրող հայերի իրավունքների պաշտպանության տեսակետից: 1735 (2006)<sup>1</sup> հանձնարարականը «ազգ» հասկացության մասին ասում է. «... 8. 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին կեսին ազգային պետությունների կազմավորման գործընթացի, ինչպես նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով և սառը պատերազմի ժամանակաշրջանում տեղի ունեցած ազգային պետությունների սահմանների փոփոխության արդյունքում Եվրոպայի խորհրդի գրեթե բոլոր անդամ պետությունների տարածքներում ապրում են մարդկանց տարբեր խմբեր, որոնք, լինելով մեկ պետության կամ քաղաքացիական ազգի քաղաքացիներ, պատկանում են այլ մշակութային ազգի կամ նրա բաղկացուցիչ մասն են: Քաղաքացիների առավել մեծաթիվ խմբի համեմատությամբ, որոնք ունեն նույն էթնոմշակութային անցյալը, բնակչության այդ մարդկանց թվաքանակով փոքր խմբերը ձևավորում են այն, ինչ կոչվում է ազգային փոքրամասնություն: 9. Այդ ազգային փոքրամասնությունները կամ համայնքները, հաճախ կազմավորվելով պետական սահմանների փոփոխության արդյունքում, հանդիսանալով ազգային պետության բաղկացուցիչ մասն ու համահիմնադիրը, օգտվում են իրենց ազգային ինքնությունը պահպանելու, արտահայտելու և ընդգծելու

<sup>1</sup>Քննարկում վեհաժողովում 2006թ. հունվարի 26-ին (7-րդ նիստ): Տե՛ս 10762 փաստաթուղթը՝ Հանձնաժողովի զեկույցը իրավաբանական հարցերի և մարդու իրավունքների գծով (զեկույցող՝ Ֆրունդա): 2006թ. հունվարի 26-ին վեհաժողովի ընդունած տեքստը (7-րդ նիստ):

իրավունքներից, ինչի մասին խոսվում է վեհաժողովի և Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի, ինչպես նաև Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 1201 (1993) և 1623 (2003) հանձնարարականներում: 10. Վեհաժողովը նաև նշում է, որ քանի որ ազգային փոքրամասնություններն իբրև այդպիսին իրավական սուբյեկտ չեն, նրանք չեն կարող պայմանագրերի կամ պակտերի կողմ լինել: Մակայն նրանք պետք է լինեն հավաքական պաշտպանության օբյեկտ, իսկ նրանց անդամները պետք է ունենան լիազորություններ կամ որպես իրավունքի անհատական սուբյեկտներ, կամ իբրև իրավական սուբյեկտ լինելու իրավունք ունեցող, փոքրամասնությունների ազգային ինքնության և համապատասխան մշակութային իրավունքների պաշտպանությանը կոչված զանազան կառույցների անդամներ... 11. Վեհաժողովն ընդունում է, որ ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման գործում առավել կարևոր դերը պատկանում է պետությանը, որի քաղաքացիներն են տվյալ ազգային փոքրամասնության ներկայացուցիչները: Ուստի, վեհաժողովը կոչ է անում անդամ պետություններին ընդունել օրենսդրական և նորմատիվ ակտեր, որոնցով ճանաչվում են ազգային փոքրամասնությունները, և բարեխղճորեն կատարել դրանք: Այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է քաղաքական ինստիտուտներում ներկայացված լինելուն, վեհաժողովը պետություններին հորդորում է կիրառել դրական (պոզիտիվ) խտրականության սկզբունքը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ, հատկապես այն դեպքերում, որոնք վերաբերում են կենտրոնացված և ապակենտրոնացված հաստատություններում (ներառյալ գործադիր իշխանության մարմինները) համամասնական ներկայացվածությանը՝ մասնավորապես այն տարածաշրջաններում, ուր ապրում են փոքրամասնությունները: 12. Վեհաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Եվրոպայի յուրաքանչյուր քաղաքացի կապված է իր ինքնությանը, մշակույթին, ավանդույթներին, պատմությանը, և հարկ է յուրաքանչյուր անհատի հնարավորություն տալ ինքնուրույն որոշելու, թե որ մշակութային «ազգին» է պատկանում, անկախ այն բանից, թե որ երկրի քաղաքացին է կամ որ քաղաքացիական ազգին է պատկանում, և մասնավորապես՝ բավարարել փոքրամասնությունների ակնկալիքները, որոնք առանձնապես սուր են զգում իրենց պատկանելությունը որոշակի մշակութային ազգին: Ինչպես քաղաքական, այնպես էլ իրավաբանական տեսակետից այս իրավիճակում կարևոր է աջակցություն ցուցաբերել պետության և ազգային փոքրամասնությունների միջև կապի հարցին առավել հանդուրժողական մոտեցմանը, որպեսզի

վերջնարդյունքում իրապես ճանաչվի յուրաքանչյուր անհատի՝ այն ազգին պատկանելու իրավունքը, որի մասն է նա իրեն զգում, լինի այդ քաղաքացիության կամ լեզվի, մշակույթի և ավանդույթների առումներով»:

Այսպիսով, ԵՄԽՎ հանձնարարականների բերված դրույթներից հետևում է, որ՝ 1. փոքրամասնությունների ազգային-մշակութային ինքնության պաշտպանությունը պատշաճ մակարդակով պետք է իրականացվի յուրաքանչյուր եվրոպական պետության իրավապետական ոլորտում և 2. փոքրամասնությունների էթնոմշակութային ուժացումն անթույլատրելի է, հատկապես եթե այն հարկադրական բնույթի է և ընտրության ազատություն չի թողնում փոքրամասնությունների ներկայացուցիչների համար:

Մինևույն ժամանակ, ԵՄԽՎ նշված հանձնարարականն ունի դրույթ այն մասին, որ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային իրավունքները «տարածքային բնույթ չեն կրում և տարածքի հետ կապված չեն, իսկ նրանց ճանաչումը և պաշտպանությունը պետք է կազմակերպվեն իրավաբանորեն՝ ինչպես յուրաքանչյուր շահագրգիռ ազգային պետության, այնպես էլ վերազգային (միջազգային) մակարդակում: Հայաստանի Հանրապետության համար դա մի ինչ-որ բացարձակ սահմանափակիչ չպետք է հանդիսանա, քանի որ մենք խոսում ենք Թուրքիայի՝ որպես այդ անձանց քաղաքացիական պատկանելության պետության, կոնկրետ ջանքերի (ուղղված երկրի արևելյան շրջաններում ապրող հայ ազգային փոքրամասնության ազգային-մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը) և որ գլխավորն է՝ հարկադիր ուժացման բնույթի որևէ միջոցից ձեռնպահ մնալու անհրաժեշտության մասին: Եթե համատարած ուժացման ներկա քաղաքականությունը շարունակվի, ապա հնարավոր է, որ Հայաստանը վերանայի իր դիրքորոշումը՝ կոշտացնելով այն, ինչը կապված կլինի այդ անձանց՝ որպես այդ տարածքներում ցեղասպանության (ֆիզիկականից մինչև ազգային-մշակութային բնաջնջում) ենթարկված բուն ժողովրդի հետնորդների, տարածքային իրավունքների ճանաչում:

Թուրքիայի մշակույթի նախարարության պաշտոնական կայքէջում մեջբերում է արվում մի փաստաթղթից, որը նվիրված է 1915-16թթ. Թուրքիայի արևելյան շրջաններից հայ բնակչության տեղահանման «իրավաբանական հիմնավորվածությանը»: Փաստաթուղթն անվանված է «1915թ. մայիսի 30-ին վարչապետի՝ ներքին գործերի, պաշտպանության և ֆինանսների նախարարություններին ուղղված նամակ, որում մանրամասն նկարագրվել է վերաբնակեցման անցկացման մեթոդը» [9]: Այնուհետև նամակից բերվում են հետևյալ քաղվածքները.

- «Տեղահանվողները պետք է ֆիզիկապես և նյութապես լիակատար

ապահովվածության մեջ վերաբնակեցվեն նախապես որոշված շրջաններում:

- Մինչև նոր տներում լրիվ տեղավորվելը նրանց միջոցներ կտրամադրվեն վերաբնակեցվողների ֆոնդից:
- Նախապես ունեցած նյութական դրությանը համապատասխան նրանց հող և գույք կտրամադրվի:
- Կարիքավորների համար պետական միջոցներով տներ կկառուցվեն, գյուղացիներին կտրամադրվեն սերմացու, գործիքներ և համապատասխան միջոցներ:
- Նախկին բնակավայրերում մնացած շարժական գույքը կփոխանցվի տերերին, անշարժ գույքը կվաճառվի, գոյացած միջոցները կփոխանցվեն նախկին տերերին:
- Զեյթունի, թթի, նարնջի այգիները, խանութները, բակերը, ֆարրիկաները և պահեստները կվաճառվեն աճուրդով կամ կտրվեն վարձակալության, որից հետո դրանց արժեքը կգրանցվի ֆոնդերում՝ տեղահանված տերերին փոխանցելու համար:
- Այս բոլոր գործերը կվարի հատուկ հանձնաժողովը, և հրահանգ կմշակվի նշված աշխատանքները կատարելու համար» [10]:

Այսպիսով, նամակի այս կետերը վկայում են Թուրքիայի կառավարության՝ «տեղահանված» անձանց կրած վնասը (կապված անշարժ և շարժական գույքի կորստի հետ) լրիվ փոխհատուցելու մտադրության մասին: Առանձնապես հարկ է ուշադրություն դարձնել նամակի այն կետի վրա, ըստ որի՝ «Նախապես ունեցած նյութական դրությանը համապատասխան նրանց հող և գույք կտրամադրվի», որը մատնանշում է «տեղահանվող» անձանց նոր բնակավայրում գույքային համարժեք տրամադրելու հրամայականը:

Ցեղասպանության և բռնի տեղահանման հետագա ընթացքը բոլորովին «չխտսեցին» Թուրքիայի կառավարության այս «բարի» ցանկությունների օգտին<sup>1</sup>, սակայն մեր թեմայի համար կարևոր է հենց նման նամակի առկայությունը, որի վերոշարադրյալ կետերը կարևոր են մինչև օրս բաց մնացած փոխհատուցման և բռնի տեղահանված մարդկանց հետնորդների ու իրավաբանական ժառանգների՝ իրենց պատմական հայրենիք հնարավոր

<sup>1</sup> 1934թ. Թուրքիայի Հանրապետության օրենքը վերաբնակեցման մասին կարգավորում էր գաղթի և վերաբնակեցման գործընթացը: Ըստ այդ օրենքի՝ միայն նրանց, ովքեր ծագմամբ և մշակույթով թուրք էին ճանաչվում, թույլ էր տրվում գալ և բնակվել Թուրքիայում: Չնայած փաստորեն թուրքական էթնիկ և մշակութային պատկանելությունը որոշելու հստակ չափանիշ չկար, այս օրենքը, ըստ Նախարարների խորհրդի որոշման, տարածվում էր թուրքերեն խոսող մահմեդական հանրությունների վրա (*Сэма Эрдер*, Новые тенденции международной миграции населения и опыт Турции // Международная миграция населения: Россия и современный мир, выпуск 4, М., 2000, <http://demoscope.ru/weekly/2002/079/analit04.php>).

վերադարձի համատեքստում<sup>1</sup>:

Հայտնի է, որ Թուրքիայից բռնի տեղահանման ենթարկվելով՝ հայերը թողել են վիթխարի կապիտալ և, համապատասխանաբար, կրել հսկայական կորուստներ: Չնայած ցեղասպանության իրականացման պահին հայերը կազմում էին Թուրքիայի բնակչության 10%-ը<sup>2</sup>, նրանց ձեռքին էր կենտրոնացած երկրի ներմուծման 60 և արտահանման 40%-ը, իսկ նրանց բաժինը ներքին առևտրում հասնում էր 80%-ի [11]:

1960-ական թթ. Դիարբեքիի շրջանում շարունակում էր ապրել ընդամենը 200 հայ ընտանիք, մինչդեռ 1914թ. այստեղ ապրում էր 570 հազար հայ [12]:

«Զգուշավոր գնահատումներով,- ասվում է ԱՄՆ-ում Հայ դատի հանձնաժողովի 2003թ. մայիսի 31-ի հայտարարությունում,- դեռևս մոտ մեկ միլիոն հայ է ապրում Արևմտյան Հայաստանում» [1, c. 74]:

Թուրքիայի օրենսդրորեն ճանաչված փոքրամասնությունների սեփականության իրավունքի խախտման հատկանշական դեպքերից մեկը պետության կողմից կրոնական փոքրամասնությունների ինստիտուցիոնալ մարմինների գույքի բռնագրավումն է: Թուրքիայի գործող օրենսդրության համաձայն՝ փոքրամասնությունների կրոնական ինստիտուտները կարող են հիմնվել միայն իբրև ֆոնդեր: Թուրքիայում ֆոնդերի իրավավիճակը սահմանվում է 1936թ. թիվ 2762 օրենքով: Այդ օրենքն էականորեն սահմանափակում է նրանց գույքային իրավունքները, քանի որ միայն այս օրենքում հայտարարագրված գույքն է իրավաբանորեն ճանաչվում, ուստիև օրենքում չհայտարարագրված գույքն առգրավվեց թուրքական հանրապետության կողմից կամ կարող է առգրավվել հետագայում: Փաստորեն, հայկական և հունական կրոնական համայնքների ունեցվածքի մեծ մասն ան-

<sup>1</sup> Այս համատեքստում հետաքրքիր է թվում մարդու իրավունքների գծով Եվրադատարանի 1996թ. դեկտեմբերի 18-ին կայացրած որոշումը «Լոիզիդուն (*Loizidou*) ընդդեմ Թուրքիայի» գործով: Գործի էությունն այն է, որ հայտատուն Կիպրոսի քաղաքացի տիկին Տ.Լոիզիդուն, որն ապրել է Կիբրենիայում, երկրի հյուսիսում, ուր մի քանի հողակտոր է ունեցել, 1974-ից գրկվել է սեփականությունից Կիպրոսի հունական և թուրքական մասերի բաժանվելու արդյունքում: Դատարանն իր որոշման մեջ նշել էր. բողոքի էությունն այն է, որ Թուրքիան, հրաժարվելով տիկին Լոիզիդունի տրամադրել սեփականության իրավունք, «մշտապես, վերջին տասնվեց տարիների ընթացքում խախտում է հայտատուի որպես սեփականատիրոջ և, մասնավորապես, իր ունեցվածքից անարգել օգտվելու իրավունքը»: Դատարանն ընդգծել է, որ բացի Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության գործողությունների արդարացման անհրաժեշտության դրկտրինը հիշատակելը, ինչպես նաև հղումն այն հարցին, որ սեփականության իրավունքը Կիպրոսի հունական և թուրքական համայնքների միջև բանակցությունների առարկա պետք է լինի, Թուրքիայի կառավարությունն արդարացնող որևէ այլ փաստարկ չի բերել: Չի բացատրվել, թե երկրի հարավային շրջաններից 1974թ. Կիպրոսում թուրքերի տարաբնակեցման անհրաժեշտությունն ինչպես կարող է արդարացում համարվել հայտատուի սեփականության իրավունքը ժխտելու համար, ինչը ստացել է սեփականությունը լրիվ ժխտելու ձև՝ նպատակ ունենալով հետագա սեփականագրկումն առանց փոխհատուցում տրամադրելու (Решения Европейского Суда по правам человека, *Лоизиду (Loizidou) против Турции*: <http://www.echr.ru/documents/decisions.htm>).

<sup>2</sup> «Օսմանյան կայսրության հայ բնակչությունը Առաջին համաշխարհային պատերազմի և 1915-16թթ. ցեղասպանության նախօրեին գնահատվում էր 2,5-3 մլն» (*Tessa Hofmann, Armenians in Turkey Today: A Critical Assessment of the Situation of the Armenian Minority in the Turkish Republic, October 2002, «Ակոսին»* հղումով (Internet edition of 17.07.2002), <http://www.agos.com.tr/indexeng.html>).

ցավ պետությանը կամ այժմ էլ ենթակա է բռնագրավման: Թուրքիայի օրենսդրական այս դրույթները հակասում են 1923թ. Լոզանի պայմանագրի 42-րդ հոդվածին, որը պարտավորեցնում է, որպեսզի թուրքական պետությունն ապահովի կրոնական փոքրամասնությունների «լիակատար պաշտպանությունը» և բոլոր անհրաժեշտ պայմանները փոքրամասնությունների ինստիտուցիոնալ կառույցների հնարավոր հիմնման համար:

Թուրքիայի՝ ԵՄ մտնելու մասին իր բանաձևում Եվրախորհրդարանը ներառել է մի կետ, որում ասվում է, որ ինքը «պնդում է, որպեսզի Թուրքիան ապահովի կրոնական համայնքների հիմնարար իրավունքների պաշտպանության լիակատար երաշխիքներ, պահանջում է, որպեսզի ֆոնդերի մասին Թուրքիայի օրենքի վերանայված նախագիծը համապատասխանեցվի Եվրախորհրդարանի և ԵՄ հանձնաժողովի հանձնարարականներին և համահունչ լինի եվրոպական չափորոշիչներին՝ բազմադասակարգ թուրքական հասարակության ակնկալիքները բավարարելու համար» (բանաձևի 36-րդ կետ)<sup>1</sup>:

Ինչպես նշում են Թուրքիայի ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցով զբաղվող փորձագետները, թուրքական սահմանադրության դրույթների և արտաքին քաղաքականության համադրումն ի հայտ է բերում դրանց սերտ հարաբերակցությունը փոքրամասնությունների հանդեպ վարվող քաղաքականության հետ, և այդ քաղաքականությունը երկակի նպատակ է հետապնդում: Մի կողմից՝ այն երաշխավորում է, որ Թուրքիայի գործողությունները համահունչ են Լոզանի պայմանագրի նորմերին, քանի որ այդ գործողությունները չեն տանում դեպի հայկական, հունական և հրեական փոքրամասնությունների ակնհայտ սահմանադրական կարգավիճակի տրամադրում: Մյուս կողմից՝ այդ քաղաքականությունը կանխում է Լոզանի պայմանագրում ամրագրված՝ փոքրամասնությունների իրավունքների ընդլայնումն ու խորացումը: Այլ խոսքերով՝ այս քաղաքականության էությունն այն է, որ ոչ մի փոքրամասնություն չպետք է ստանա փոքրամասնության՝ օրենսդրորեն ամրագրված կարգավիճակ և, միևնույն ժամանակ, բոլոր երեք պաշտոնապես ճանաչված ոչ մահմեդական փոքրամասնությունները պետք է բավարարվեն այն իրավունքներով, որոնք նրանց արդեն տրամադրվել են [13]:

Թուրքիայի արևելյան շրջանները սոցիալական բոլոր ցուցանիշներով զարգացման ամենացածր մակարդակում են: Ինչպես նշում են փորձագետները, մի կողմից՝ բնակչության տարիքային կազմը Թուրքիայի համար զգալի մրցակցային առավելություն է ապահովում. Թուրքիայի Հանրապետությունում բարձր է երիտասարդների տեսակարար կշիռը: Մյուս կողմից՝

<sup>1</sup> European Parliament resolution on Turkey's progress towards accession, (2006/2118(INI)), 27 September 2006.

շատ կարևոր է աշխատանքային ռեսուրսների հանրակրթական և մասնագիտական պատրաստվածության մակարդակը: Այս ոլորտում Թուրքիան դեռ պետք է թռիչք կատարի, որը թույլ կտա վերացնել հետամնացությունը եվրոպական երկրներից և ԵՄ գծով գործընկերներին առաջարկել ոչ միայն երիտասարդ, այլև արդի պահանջներին համապատասխանող որակյալ աշխատուժ: 1997թ. երկրի սահմանադրության 42-րդ հոդվածը փոփոխության ենթարկվեց. մինչև 15 տարեկան դեռահասների համար պետք է ապահովվեր պարտադիր 8-ամյա կրթություն: Պարտադիր միջնակարգ 8-ամյա անվճար կրթության մասին թիվ 4306 օրենքը Թուրքիայում ընդունվեց 1997թ. օգոստոսի 18-ին: Օրենքը հրապարակվեց այն ժամանակ, երբ պարզվեց, որ երկրի չափահաս բնակչության մի մեծ բազմություն՝ 9 մլն մարդ, փաստորեն կրթություն չունի: Թուրքիայում հաշվվում էին 6,5 մլն անգրագետ, 2,5 մլն մարդ ամբողջական տարրական կրթություն չունեին: Ուսուցիչների պակասի պատճառով 17,1 հազար տարրական դպրոցներում կային դասարաններ, որոնցում միացվում էին ուսուցման տարբեր մակարդակները, քաղաքային դպրոցների 40 և գյուղական դպրոցների 14%-ում դասարաններում աշակերտների թիվը կրկնակի շատ էր: Ընտրովի դիտարկումները ցույց են տվել, որ «ուսուցիչ-աշակերտ» հարաբերակցությունը երկրի տարբեր շրջաններում բավական տարբեր է: Այսպես, Արևմտյան Անատոլիայում, ներառյալ Էգեյան և Մարմարա ծովերի մերձափնյա շրջանները, այդ հարաբերակցությունը կազմել է 1:27,4 - 1:24,8, Միջերկրածովյան մերձափնյա շրջաններում՝ 1:29,6, Ներքին Անատոլիայի շրջաններում՝ 1:45,8, գյուղական դպրոցներում՝ միջինը 1:23,9: 1997թ. առաջին աստիճանի միջնակարգ հանրակրթական դպրոցների թիվը 8,4 հազար էր, դրանցում սովորում էին 2,3 մլն աշակերտներ: Միջնակարգ դպրոցներն առավել մեծ թիվ էին կազմում Մարմարա ծովի մերձափնյա շրջաններում՝ 2,2 հազար և Սևծովյան մերձափնյա շրջաններում՝ 1,5 հազար, Արևելյան Անատոլիայում դրանք ամենաքիչն են՝ 0,9 հազար: Այստեղ էլ «ուսուցիչ-աշակերտ» հարաբերակցության ցուցանիշն ամենաբարձրն է՝ 1:48,5 [14]:

### **3. Տնտեսական բլոկ**

Թուրքիայի արևելյան շրջանները տնտեսական առումով երկրի առավել հետամնաց շրջաններն են: Երկրի այլ շրջանների համեմատ ավելի հետամնաց ու պակաս զարգացած լինելով՝ դրանցում անհրաժեշտ տնտեսական հիմք չի ստեղծվում բնակչության արդյունավետ զարգացման համար: Պատճառները պետք է որոնել ոչ այնքան բնական-աշխարհագրական, որքան այդ շրջանները զարգացնելու ցանկության բացակայության կամ, հնարավոր է, միտումնավոր արգելակման հարթությունում: Թուրքական կա-

ռավարությունն առաջնահերթ նշանակություն է տալիս Եվրոպային հարող իր արևմտյան շրջանների տնտեսական զարգացմանը, ինչպես նաև ծրագրում է լայնածավալ տնտեսական նախագծեր իրականացնել երկրի հարավարևելյան մասում: Վերջինն առաջին հերթին կապված է քուրդ փոքրամասնության կենսամակարդակը բարձրացնելու ցանկության հետ, ինչը երկու հիմնական նպատակ է հետապնդում. ազգային-ազատագրական պայքարից քրդերին շեղել դեպի ինտեգրում թուրքական հասարակությանը և ԵՄ պահանջների կատարում՝ շրջաններում տնտեսական ցուցանիշների հավասարեցման կտրվածքով:

Այսպիսով, շրջաններում թուրքական տնտեսական քաղաքականությունն ունի վերականգնողական-ճգնաժամային բնույթ, ինչը ենթադրում է նախաձեռնել հարկադրական քայլեր՝ հարավարևելյան անջատողական շրջանների հնարավոր կորստի սպառնալիքից դրդված:

Իշխող Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) տնտեսական քաղաքականությունն ընդհանուր առմամբ զբաղվում է այն խնդիրների լուծմամբ, որոնք սերտորեն կապված են պետության ազգային անվտանգության և ԵՄ անդամ դառնալ պատրաստվող երկրի նպաստավոր իմիջի ապահովման հետ:

Երկրում իշխող քաղաքական կուսակցության դերն ստանձնելուց անմիջապես հետո ԱԶԿ-ն ստիպված էր անսալ իր տնտեսական վերնախավի ձայնին և բռնել եվրահիստեգրման ճանապարհը. «2002թ. նոյեմբերի 4-ին Ստամբուլում հրապարակված Թուրքիայի Արդյունաբերողների և ձեռներեցների միության հայտարարությունում ընդգծվում էր, որ խորհրդարանում ձայների բացարձակ մեծամասնություն ստացած կուսակցությունը պետք է արիություն ունենա ընդունելու արդեն հասունացած դժվարին որոշումներ և հարկ չկա ընկնել պոպուլիզմի մեջ: Թուրք արդյունաբերողներն ու ձեռներեցները կոչ արեցին ապագա կառավարությանը շարունակել Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համաձայնեցված բարեփոխումների ծրագրի իրականացումը: Հակառակ պարագայում երկիրը չի կարողանա դուրս գալ տնտեսական ճգնաժամից: Այս հայտարարության հետ գրեթե միաժամանակ ԱԶԿ առաջնորդ Ռ.Թ.Էրդողանը իր ելույթներից մեկում հաստատել է, որ նոր կառավարությունն ակտիվորեն կաջակցի Թուրքիայի Եվրամիություն մտնելուն և նրա ինտեգրմանը համաշխարհային տնտեսությանը, կհամագործակցի ԱՄՆ-ի հետ՝ հաշվի առնելով ազգային շահերը: Նրա խոսքերով՝ Թուրքիան այժմ, «ինչպես երբեք, բաց կլինի օտարերկրյան ներդրողների համար» [15]:

ԱԶԿ իշխանության տարիները ցույց տվեցին թուրքական ղեկավարության անտարբերությունը երկրի արևելքի տնտեսական հիմնախնդիր-



ների հանդեպ: Հայաստանի շրջափակումը և սահմանների փակ լինելը նաև Թուրքիայի արևելյան շրջանների շրջափակումն է: Երկիրը մեկուսացվածության մեջ է պահում սեփական շրջանները, ինչը խանգարում է դրանց հետամնացության հաղթահարմանը: Շրջափակումը շարունակելուն ուղղված փաստարկներն անբնական են և հիմնագուրկ: Սահմանը բացելու հարցը դիտարկվում է «ադրբեջանական» և մի շարք այլ պայմանների շեշտադրմամբ<sup>1</sup>:

Թուրքիայի ղեկավարության նման քաղաքականության անքակտելի բաղադրիչն է այն, որ սահմանի բացումը և Հայաստանի ու Թուրքիայի արևելյան շրջանների միջև միջտարածքային կապերի հաստատումը կարող է հանգեցնել նրան, որ «կլորովի» վերջիններիս պետական պատկանելության հարցը թեկուզ այն պատճառով, որ այնտեղ դեռ ապրում են ցեղասպանության ենթարկվածների սերունդները: Իսկ գլխավորն այն է, որ այդ շրջանների տնտեսական աշխուժացումն ուղղակիորեն կկապվի Հայաստանի հետ առևտրի և հաղորդակցության հաստատմանը: Մինևս ժամանակ, հնարավոր է, որ Թուրքիայի ներկա ղեկավարության՝ արևելյան նահանգների տնտեսական զարգացման հանդեպ անտարբերության գլխավոր գործոններից մեկը շատ սովորական բացատրություն ունի՝ դրանք զարգացնելու ռազմավարության բացակայությունը՝ կապված նույնիսկ միջանկյալ («մարտավարական») ծրագրերի և նախագծերի իրականացման համար անհրաժեշտ բավարար ֆինանսական ռեսուրսներ չլինելու հետ:

Թուրքիայի արևելյան շրջանները շրջափակված են ոչ միայն առևտուր-հաղորդակցություն գծով, այլև էներգետիկ ներդրումների ուղղությամբ: 2006թ. մարտին Թուրքիայի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Հիլմի Գյուլերը հայտարարել է, որ նախատեսվում է կառուցել 3 ատոմակայան և նշել է դրանց կառուցման տեղը՝ Մինոպ, Մերսին-Աքքոյու և Մուխլա (երեքն էլ գտնվում են Թուրքիայի արևմտյան շրջաններում)<sup>2</sup>:

<sup>1</sup> «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը կարող են բացվել միայն երեք պայմանի դեպքում: Թուրքիայի նախագահը, վարչապետը և խորհրդարանի ղեկավարը բազմիցս խոսել են այդ մասին: Սահմանը բացելու համար Հայաստանը պետք է հրաժարվի գոյություն չունեցող ցեղասպանությունը պնդելուց, Թուրքիայի նկատմամբ տարածքային հավակնություններից և ազատի Ադրբեջանի զավթված տարածքները»,- հայտարարել է Կարսում Ադրբեջանի գլխավոր հյուպատոս Հասան Չեյնալովը: Խոսելով Կարսի քաղաքապետ Նաիֆ Ալիբեյջոլու սահմանը բացելու կարևորության վերաբերյալ հայտարարության մասին Չ.Չեյնալովը նշել է, որ Թուրքիայում կան ուժեր, որոնք շահագրգռված են սահմանի բացմամբ. «Ես հավաստիացնում եմ նման ուժերի առկայության մասին, նրանք իրենց անձնական շահերն ունեն սահմանի բացման մեջ: Սակայն ես մեկ անգամ ևս նշում եմ, որ սահմանի բացումը ոչ քաղաքապետի, ոչ էլ այլ շահագրգիռ անձանց իրավասության մեջ չի մտնում» (Ադրբեջանի գլխավոր հյուպատոսը Կարսում (Генконсул Азербайджана в Карсе: «Турецко-армянская граница может быть открыта только при трех условиях», <http://www.regnum.ru/news/682517.html>, 01.08.2006).

<sup>2</sup> Ինչպես նշում են իրենք թուրք փորձագետները, ատոմակայանների կառուցումը չի լուծի Թուրքիայի էներգետիկ հիմնախնդիրները. «Թուրքիան ամեն տարի կորցնում է \$10 մլրդ սեփական հիդրոռեսուրսների անարդյունավետ օգտագործման պատճառով. վերջինների ընդհանուր պոտենցիալը համարժեք է 16 ԱԷԿ-ի հզորությանը, կարծում է երկրի էներգետիկ շուկաների կարգավորման կոմիտեի ղեկավար Յուսուֆ Գյունայը: «Ատոմակայանների շինարարությունը չի լուծի Թուրքիայի էներգետիկ հիմնախնդիրները: Երկրի իշխանությունները պետք է անցկացնեն սեփական բնական ռեսուրսների օգտագործման վրա հիմնված էներգետիկ քաղաքականություն»,- ասել է նա» (РИА «Новости», 4.05.2006).

Թուրքիայի արևելյան շրջանների տնտեսական հետամնացությունը հաղթահարելուն և, մասնավորապես, միջազգային էներգետիկական ծրագրերում դրանց ներգրավմանը կարող է նպաստել հայ-թուրքական կապերի հաստատումը՝ ռուսական կողմի շահագրգիռ մասնակցությամբ<sup>1</sup>:

Թուրքիայի արևելյան շրջանները հիմնականում գյուղատնտեսությամբ են զբաղվում (անասնաբուծություն, բանջարաբուծություն) և խիստ ցածր է արդյունաբերական հզորությունների զարգացման աստիճանը: Այս մասին խոսվում է Եվրահանձնաժողովի (գյուղատնտեսության տնօրինություն) 2003թ. զեկույցում<sup>2</sup>:

Թուրքական կողմի համար հատկանշական է արևելյան շրջանների բնակչության հնարավորությունների իրավաքաղաքական անհավասարության համահարթեցման փաստը էթնիկական համատեքստում (առաջին հերթին՝ հարավարևելյան մասում, քրդեր-թուրքեր ուղղությամբ): Հատկանշական է նաև առկա խտրական մոտեցումների բացատրությունը երկրի վարչական տարածքների շրջանային-տնտեսական զարգացման անհավասարության դիրքերից: Ընդ որում՝ հաճախ բերվում է Իտալիայի՝ «Հյուսիս-Հարավ» շրջանային-տնտեսական անհամաչափության փորձը<sup>3</sup>:

Ընդգծենք, որ Թուրքիայի տարածքային տնտեսական քաղաքականությունը չի կարող անվերջ հանդուրժել սեփական արևելյան շրջանների շրջափակումը և մեկուսացումը և, վաղ թե ուշ, կհանգի դրա վերանայման անհրաժեշտությանը:

Թուրքիայի կողմից սահմանամերձ շրջանների համագործակցության գծով պարտականությունները չկատարելը, ինչպես նաև սահմանի փակումը սահմանամերձ շրջանների ամբողջ երկայնքով իրավական բնույթի խախտում է, ինչը չի կարող արդարացվել երրորդ երկրների (Ադրբեջանի) հետ փոխհարաբերությունների քաղաքական նրբերանգներով: 1980թ. Եվրոպական շրջանակային կոնվենցիայի 1-ին հոդվածում կա իրավաբանական բնույթի պարտադիր նորմ. «Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ պարտավորվում է (ընդգծ. հեղ.) խրախուսել սահմանամերձ համագործակ-

<sup>1</sup> 2006թ. մարտի 29-ին Ռուսաստանի Դաշնության արտգործնախարար Ս.Լավրովը և ՌԹ «ԷՅՏ Ռոսսի» ԲԲԸ վարչության նախագահ Ա.Չուբայսը ստորագրեցին համաձայնագիր Ռուսաստանի ԱԳՆ-ի և ՌԹ «ԷՅՏ Ռոսսի» ԲԲԸ-ի համագործակցության մասին: Համաձայնագրում տրված են կողմերի միջև համագործակցության սկզբունքները, ուղղությունները և ձևերը: Այն, մասնավորապես, նախատեսում է արտաքին քաղաքական աջակցություն ցուցաբերել ՌԹ «ԷՅՏ Ռոսսի» ԲԲԸ-ի միջազգային գործունեությանը, կարգավորել տեղեկատվության փոխանակումը, իրականացնել էլեկտրաէներգետիկայի ոլորտում միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի նախագծերի փորձաքննություն (<http://www.raoes.ru/ru/news/news/pr/show.cgi?pr290306mi.htm>).

<sup>2</sup> European Commission (Directorate-General for Agriculture), Agricultural Situation in the Candidate Countries, Country Report Turkey, November 2003.

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, Թուրքիայի ներկայացուցիչ Սունգարի Էլույթը Երեխաների իրավունքների կոմիտեում (Committee on the Rights of the Child (United Nations), Twenty-seventh session, Summary Record of the 702<sup>nd</sup> Meeting: Turkey (CRC/C/SR.702.), 11.02.2002, <http://www.unhchr.ch>.

ցությունը տարածքային ընկերակցությունների և իշխանությունների միջև<sup>1</sup>, որոնք գտնվում են պայմանավորվող այլ կողմերի իրավասության ներքո: Կոնվենցիայի յուրաքանչյուր մասնակից ջանքեր կգործադրի ցանկացած համաձայնագրի և պայմանավորվածության կնքմանն աջակցելու նպատակով, որոնք անհրաժեշտ կհամարվեն այդ նպատակի համար՝ հաշվի առնելով կողմերից յուրաքանչյուրի սահմանադրական դրույթները»: Կոնվենցիայի համաձայն՝ սահմանամերձ համագործակցությունն իրականացվում է տարածքային ընկերակցությունների և իշխանությունների իրավասությունների սահմաններում, որոնք ընդունվում են կողմերից յուրաքանչյուրի ներքին օրենսդրությամբ: 1980թ. կոնվենցիան ցանկալի է համարում սահմանամերձ տարածքային ընկերակցությունների միջև շրջանակային համաձայնագրերի կնքումը, որոնք կկարգավորեն համագործակցության կոնկրետ ոլորտները: Կոնվենցիայում խոսվում է նաև սահմանամերձ տարածքային ընկերակցություններին ազգային կենտրոնական իշխանությունների կողմից ամեն տեսակ աջակցության ցուցաբերման անհրաժեշտության մասին. «Այս կոնվենցիայի նպատակներին համապատասխան՝ պայմանավորվող կողմերը... կխրախուսեն տարածքային ընկերակցությունների և իշխանությունների ցանկացած նախաձեռնություն՝ հիմնված տարածքային ընկերակցությունների և իշխանությունների միջև Եվրոպայի խորհրդի պատրաստած շրջանակային պայմանավորվածությունների վրա: Եթե անհրաժեշտ համարեն, նրանք կարող են կիրառել նաև Եվրոպայի խորհրդի՝ տարածքային ընկերակցությունների և իշխանությունների համագործակցությանն աջակցելու նպատակով պատրաստած երկկողմ և բազմակողմ միջպետական տիպային համաձայնագրերը: Կնքված պայմանագրերը և համաձայնագրերը կարող են հենվել այս կոնվենցիայի<sup>2</sup> հավելված հանդիսացող տիպային և շրջանակային համաձայնագրերին, կանոնադրություններին և պայմանագրերին... բոլոր այն փոփոխություններով, որոնք կարող է պահանջել պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը՝ որոշակի պայմաններին համապատասխան»:

<sup>1</sup> «Տարածքային ընկերակցություններ և իշխանություններ» եզրը նշանակում է՝ ընկերակցություններ, իշխանական կառույցներ կամ դրանց մարմինները, որոնք ունեն իշխանական իրավասություններ տարածքային և տեղական մակարդակում և դիտարկվում են որպես այդպիսին յուրաքանչյուր պետության ներքին օրենսդրության համապատասխան:

<sup>2</sup> Կոնվենցիայի նշված հավելվածի համաձայն՝ տեղական իշխանությունների միջև շրջանակային համաձայնագրերը, կանոնադրությունները և պայմանագրերը կարող են վերաբերվել, մասնավորապես, տեղական իշխանությունների միջև խորհրդատվական խմբերի ստեղծմանը, սահմանամերձ կոմունալ գործերի կառավարման կորոնիացմանը, սպրանքների մատակարարմանը և ծառայությունների տրամադրմանը սահմանամերձ տեղական իշխանությունների կողմից, տեղական իշխանությունների սահմանամերձ համագործակցության մարմինների ստեղծմանը, միջտարածաշրջանային և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցությանը տնտեսական և սոցիալական ոլորտներում, բնակչության պաշտպանության և արտակարգ իրավիճակներում փոխօգնության գծով սահմանամերձ համագործակցության զարգացմանը, վերազգային համագործակցությանը դպրոցների և տեղական ընկերակցությունների միջև, սահմանամերձ կամ միջտարածքային համագործակցությանը սահմանային գետերի երկայնքով հողերի օգտագործման ոլորտում:

Թուրքիայի առաջընթացի մասին իր բանաձևում Եվրախորհրդարանը հատկապես ընդգծել է, որ «Թուրքիան շարունակում է ջանքեր գործադրել Հայաստանի չարդարացված շրջափակման ուղղությամբ: Այդ շրջափակումը սպառնում է տարածաշրջանային կայունությանը, խոչընդոտում է բարի-դրացիական տարածաշրջանային հարաբերությունների զարգացմանը և խախտում է գործընկերության վերանայված պլանի (*Accession Partnership*), Շրջանակային բանակցությունների պահանջների (*Negotiation Framework*), ժողովրդավարության և օրենքի գերակայությունը» (բանաձևի «AC» կետ)<sup>1</sup>:

### Հետևություններ

1. Թուրքիայի արևելյան շրջանների հայերը բավական ամուրֆ են՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ուղղությամբ նրանց հետ աշխատանքներ տանելու առումով: Դա բացատրվում է հետևյալ ինդիքներով. 1. ցածր է հայ ինքնության գիտակցումը, 2. չկան աշխատանքի ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ներկա պահին չկան նախադրյալներ Թուրքիայի արևելյան շրջանների հայերի կողմից իրենց ազգային-մշակութային, սոցիալ-տնտեսական իրավունքների և ազատությունների պաշտպանության ինստիտուցիոնալացման համար, 3. Թուրքիայի ներքաղաքական ուժերը (գրեթե բոլոր քաղաքական ուժերը՝ աջեր, ձախեր, կենտրոն) համառորեն դիմակայում են, 4. չկան իրավաքաղաքական, տնտեսական և մշակութային ծրագրեր Հայաստանի Հանրապետության՝ որպես իրենց բնօրրանից արտաքսված հայրենակիցների պատմական հայրենիքի, կողմից:

Այս տարածքներում հայ փոքրամասնության իրավունքների կազմակերպված պաշտպանության հեռանկարային ուղղություններից մեկը կարող է դառնալ ինստիտուցիոնալ մեխանիզմների (հասարակական կազմակերպությունների) ստեղծումը, որոնք կհամախմբեն տեղի հայերին օրինական շահերի շուրջ (մշակութային ինքնության պաշտպանություն, աշխատատեղերի ստեղծում, սոցիալական ապահովում և բարեգործություն):

2. Չնայած վերջին ժամանակներս Թուրքիան հարկադրված ներդնում է ԵՄ պահանջները իր պետական մեխանիզմից զինվորական բաղադրիչը դուրս մղելու ուղղությամբ, այնուամենայնիվ, գործընթացը դանդաղ է և որ գլխավորն է՝ ուղեկցվում է զինվորական դասի բացահայտ դժգոհությամբ: Ինչպես ցույց է տալիս թուրքական իրականության նախորդ փորձը, ներկա դրությունը կարող է հանգեցնել թուրքական հասարակության «համախմբման» փորձերի՝ ներքին մեխանիզմների օգնությամբ, այն է՝ գտնել «ներքին թշնամու», ինչը մեխանիկորեն կհանգեցնի ազգային փոքրամասնությունների իրավունքների զանգվածային խախտումների:

Թուրքիայի արևելյան շրջանների քաղաքական կայունությունն ընդ-

<sup>1</sup> European Parliament resolution on Turkey's progress towards accession, (2006/2118(INI)), 27 September 2006.

հանուր առմամբ ապահովվում է ռազմավարչական մարմինների կոշտ քայլերի միջոցով, ինչը նշանակում է այդտեղ ապրող բնակչության իրավունքների ամբողջ համախմբի զգալի սահմանափակումներ: Եթե երկրի հարավարևելքում ապրող քրդերն այս կամ այն չափով դարձել են ինչպես Թուրքիայի ներքաղաքական, այնպես էլ շահագրգիռ երկրների արտաքին քաղաքական ուժերի ուշադրության առարկան, ինչի արդյունքում համեմատաբար բարելավվել է քրդական փոքրամասնության իրավունքների պաշտպանությունը, ապա հայերի պարագայում լիակատար լռություն է ներքաղաքական ուժերի կողմից, իսկ արտաքին ուժերը հարցին արժանի ուշադրություն չեն հատկացնում: Թե՛ առաջինների, թե՛ երկրորդների ուշադրությունը կարելի է գրավել այդ շրջանների հենց հայ բնակչության ակտիվ գործողություններով: Այդ գործողություններն ընդհանուր գծերով պետք է հիմնվեն այն պահանջների առաջադրման վրա, ըստ որոնց՝ վերջ պետք է տրվի խտրական քաղաքականությանը և Հայաստանում իրենց հայրենակիցների հետ օրինական կապեր հաստատելու հնարավորություն ընձեռվի:

3. Թուրքիայի արևելյան շրջանները սոցիալապես և տնտեսապես մեկուսացված են: Մարդկային զարգացման ցուցանիշներն (կրթություն, առողջապահություն, զբաղվածություն և այլն) այս տարածքներում, երկրի այլ շրջանների համեմատ, ամենացածրն են: Արևելյան շրջաններն ընդհանրապես չեն ընդգրկվում լայնածավալ բիզնես-ծրագրերում: Թուրքական դեկավարության թշնամանքը այն ամենի հանդեպ, ինչ հայկական է, հատկապես նրանց պատմական բնակավայրերում, հանգեցնում է սեփական քաղաքացիների (որոնք վախենում են ցույց տալ իրենց էթնիկական ծագումն ու պատկանելությունը) զարգանալու օրինական իրավունքների ոտնահարմանը: Այս իրավիճակի արդյունքը կարող է լինել կամ այս տարածքների հայերի լրիվ ուժացումը, կամ նրանց դուրսմղումը:

4. Թուրքիայի արևելքում մարդու իրավունքների հետ կապված ընդհանուր անբարենպաստ իրավիճակը և տնտեսական մեկուսացվածությունը պահանջում են շահագրգիռ պետությունների ակտիվ ջանքերի գործադրում: Դրանց շարքում հատուկ տեղ պետք է գրավի Հայաստանը: Թուրքիայի արևելքում տիրող իրավիճակի նկատմամբ արտաքին ուժերի սևեռուն ուշադրությունը գրավելու արտաքին համակարգային գործոններ ներկա դրությամբ չկան:

Թուրքիայի արևելքում ընթացող գործընթացները, որոնցում հայ բնակչությունը կարող է հատուկ տեղ գրավել, պետք է խթանվեն հենց տեղական մակարդակով: Դա ենթադրում է մեծածավալ աշխատանք տեղի «հայկական բնույթի» միտումները, հետաքրքրությունները բացահայտելու և դրանք կառուցողական, իրավապես հիմնավորված հունով տանելու ուղղությամբ:

*Հոկտեմբեր, 2006թ.*

## Աղբյուրներ և գրականություն

1. *Карен Ханларян*, Армянский этнорелигиозный элемент в Западной Армении // «21 Век», № 2, 2005, с. 68-69.
2. *Поцхверия Б.М.*, Внешняя политика Турции после второй мировой войны, М., 1976, с. 264.
3. *İrfan C.Acar*, Dış Politika, Ankara, 1993, с. 34.
4. *Рубен Сафрастян*, Турция и кипрская проблема: эпизоды «большой игры» // «21 Век», № 2, 2005, с. 55.
5. Рауф Денкташ, Интересы турок-киприотов превыше даже членства Турции в ЕС: <http://www.regnum.ru/news/665885.html>, 30.06.2006.
6. *Тэпс Дени Санд*, Проблемы защиты прав национальных меньшинств, <http://www.narodru.ru/smi2982.html>, 14.07.2005.
7. *Бюлент Араз, Хавва Каракаш-Келеш*, Армяно-турецкие отношения: критический анализ, <http://www.ca-c.org/journal/rus-04-2002/13>.
8. United Nations Treaty Collection Web Site: [http://untreaty.un.org/humanrights-convs/Chapt\\_IV\\_4/reservations/Turkey.pdf#search](http://untreaty.un.org/humanrights-convs/Chapt_IV_4/reservations/Turkey.pdf#search).
9. *Юсуф Халачоглу*, Армянские переселения и реальности (1914-1918гг.) // Издание Института турецкой истории, Анкара, 2001, с. 70.
10. Закон о переселении и его исполнение (официальный сайт министерства культуры Турции): <http://www.kultur.gov.tr/RU/BelgeGoster.aspx?1C04EA51480895DAAAF6AA849816B2EF563BC337E5066206>.
11. *Халмухамедов А.М.*, Армянская диаспора как социокультурный и политический феномен // «Социологические исследования», 1999, № 2, с. 55.
12. *Tessa Hofmann*, Armenians in Turkey Today: A Critical Assessment of the Situation of the Armenian Minority in the Turkish Republic, October 2002, со ссылкой на William Dalrymple, From the Holy Mountain: A Journey in the Shadow of Byzantium, London, 1997, p. 81 f.
13. *Dilek Kurban*, Confronting Equality: The Need for Constitutional Protection of Minorities on Turkey's Path to the European Union, 2003, p. 178, <http://www.rightsagenda.org/dosyalar/dokuman/dilekkurban-columbiaarticle.doc>.
14. *Ли Ю.А.*, Проблема повышения качества человеческого капитала в современной Турции // Сборник статей «Ближний Восток и современность», Выпуск 17, М., 2003, с. 340.
15. *Гурьев А.*, Партия справедливости и развития Турции: три года у власти, <http://www.iimes.ru>, 30.11.2005.

## ДИСКРИМИНАЦИОННАЯ НАЦИОНАЛЬНАЯ ПОЛИТИКА ТУРЦИИ

*Михаил Агаджанян*

Резюме

Армянский народ претерпел страшные лишения на территориях своей исторической Родины, которые ныне находятся под государственным суверенитетом Турции. Современность свидетельствует о том, что хотя несколько десятков лет назад армянское население являлось этническим большинством на территориях некоторых восточных провинций Османской Анатолии и представляло собой относительно целостную этническую группу с единым национальным самосознанием, в настоящее время приходится говорить скорее о рассеянном этно-религиозном элементе армянского происхождения, который представлен в лице граждан Турции, знающих или догадывающихся о своих армянских корнях. В отношении сохранившегося армянства в восточных регионах Турции налицо «информационный голод», не позволяющий представить адекватную картину как степени их национальной самоидентификации, так и реальных проявлений дискриминации по отношению к ним. То, что дискриминация присутствует, не вызывает особых вопросов со стороны международных наблюдателей правительственного и неправительственного свойства. Вопрос в том, как долго может продолжаться такая дискриминационная политика турецкого руководства, которое абсолютно индифферентно к вопросу вымирающего коренного этноса на территориях своих восточных регионов. Ассимиляция армянства сопровождается и имеет своими последствиями политическую и экономическую изоляцию, социальную маргинализацию и утрату национально-культурной самобытности коренного народа на данных территориях. Необходима разносторонняя поддержка армянства восточных регионов Турции, концентрирующаяся вокруг защиты его прав национального меньшинства и преследующая цель сохранения и поступательного развития коренного народа на данных территориях.

**Հավելված**  
**(վիճակագրական տվյալներ)<sup>1</sup>**

**1. Կենտրոնական Անատոլիայի երեք նահանգների  
(Կայսերի, Սվազ, Յոզղաթ) և հյուսիսարևելյան Անատոլիայի  
չորս նահանգների (Ադրը, Կարս, Իզմիր, Արդահան)  
տարածքային և ժողովրդագրական ցուցանիշները**

*Տարածքը (կմ<sup>2</sup>)*

Կայսերի 17109	Ադրը 11498
Սվազ 28567	Կարս 10139
Յոզղաթ 14074	Իզմիր 3587
	Արդահան 4967

*Բնակչության թիվը, 2000թ.*

Կայսերի 1060432	Ադրը 528744
Սվազ 755091	Կարս 325016
Յոզղաթ 682919	Իզմիր 168634
	Արդահան 133756

*Բնակչության թվի աճը, 1990-2000թթ. (%)*

Կայսերի 11,62	Ադրը 19,03
Սվազ -1,54	Կարս -9,05
Յոզղաթ 16,55	Իզմիր 16,76
	Արդահան -20,22

*Բնակչության միգրացիան, 2000թ.  
(բնակչության աճի և նվազման տարբերությունը, %)*

Կայսերի - 3,46	Ադրը -56,45
Սվազ - 51,02	Կարս - 61,15
Յոզղաթ - 41,88	Իզմիր - 9,30
	Արդահան - 106,72

<sup>1</sup> Turkish Statistical Institute (Թուրքիայի կառավարության առնչվող վիճակագրության ինստիտուտ), Turkey's Statistical Yearbook 2005, Ankara, May 2006, <http://www.tuik.gov.tr>.



**2. Կենտրոնական Անատոլիայի երեք նահանգների (Կայսերի, Սվազ, Յոզղաթ) և հյուսիսարևելյան Անատոլիայի չորս նահանգների (Ադրը, Կարս, Իզմիր, Արդահան) սոցիալական և տնտեսական ցուցանիշները**

*Բժշկական հաստատությունների թիվը/հիվանդատեղ (համապատասխանաբար), 2004թ.*

ա) Առողջապահության նախարարության հիվանդանոցներ	
Կայսերի 13 / 1380	Ադրը 7 / 280
Սվազ 12 / 1380	Կարս 4 / 355
Յոզղաթ 11 / 980	Իզմիր 2 / 130
	Արդահան 3 / 155

բ) Մասնավոր հիվանդանոցներ	
Կայսերի 5 / 103	Ադրը - / -
Սվազ - / -	Կարս - / -
Յոզղաթ - / -	Իզմիր - / -
	Արդահան - / -

*Դպրոցների, աշակերտների, ուսուցիչների թիվը (համապատասխանաբար), 2004-2005 ուստարի*

ա) Տարրական կրթություն	
Կայսերի 1744 / 359923 / 15135	Ադրը 1461 / 223528 / 6862
Սվազ տ/չ <sup>1</sup>	Կարս տ/չ
Յոզղաթ տ/չ	Իզմիր տ/չ
	Արդահան տ/չ

բ) Միջնակարգ կրթություն	
Կայսերի 281 / 109287 / 6351	Ադրը 91 / 33013 / 1475
Սվազ տ/չ	Կարս տ/չ
Յոզղաթ տ/չ	Իզմիր տ/չ
	Արդահան տ/չ

*Էլեկտրաէներգիայի սպառում, 2004թ. (մվտ/ժ)*

Կայսերի 1788784	Ադրը 281807
Սվազ 554694	Կարս 190444
Յոզղաթ 429504	Իզմիր 58137
	Արդահան 50232

<sup>1</sup>Տվյալներ չկան:

Արտահանում - ներմուծում, 2003/2004/2005թթ.  
համապատասխանաբար (\$ մլն)

ա) Արտահանում	
Կայսերի 376 / 454 / 470	Ադրը 32 / 55 / 72
Սվազ - / - / 3	Կարս - / - / -
Յոզդաթ - / - / -	Իզմիր 17 / 23 / 22
	Արդահան - / - / -
բ) Ներմուծում	
Կայսերի 258 / 424 / 524	Ադրը 4 / 10 / 32
Սվազ - / - / 4	Կարս - / - / -
Յոզդաթ - / - / -	Իզմիր 3 / 4 / 4
	Արդահան - / - / -

Բաժինը երկրի ՀՆԱ-ում 2001թ. (%)

Կայսերի 1,3	Ադրը 0,2
Սվազ 0,7	Կարս 0,2
Յոզդաթ 0,4	Իզմիր 0,1
	Արդահան 0,1